# ՀԻՆԳ ՀԱՑԻ ԴԱՍԸ

## Առաջնորդել Հիսուսի նման (Մաս 2)

*«Հիսուսն աչքերը վեր բարձրացրեց ու տեսավ, որ բազում ժողովուրդ է գալիս իր մոտ: Նա Փիլիպպոսին ասաց. «Որտեղի՞ց պիտի հաց գնենք, որ նրանք ուտեն»: Բայց Հիսուսը սա նրան փորձելու համար ասաց, որովհետև ինքը գիտեր, թե ի՛նչ է անելու:»* Հովհաննես 6:5-6

## Դաս 1: Ձողաչափի դասը

### Մի չափիր դժվարությունը կամ պայքարը քո կարողությունների չափով

*«Փիլիպպոսը նրան պատասխանեց. «Նույնիսկ երկու հարյուր դինարի հացը նրանց չի բավականացնի, թեկուզ նրանցից յուրաքանչյուրը մի կտոր վերցնի:»* Հովհաննես 6:7

**Հիսուսը սիրում է «անելանելի» իրավիճակները**

**Ինչո՞ւ: Որովհետև այն ընձեռնում է կատարյալ փորձի հնարավորություն**

- **Աստված դնում է մեզ անելանելի իրավիճակների մեջ, որ աճեցնի մեր թերզարգացած հավատքը**
- **Աստված դնում է մեզ անելանելի իրավիճակների մեջ, որ ամրացնի մեր հավիտենական հույսը**
- **Աստված դնում է մեզ անելանելի իրավիճակների մեջ, որ ցույց տա մեզ իր աննման սերը**

## Դաս 2: Կշեռքի դասը

### Քիչը Հիսուսի ձեռքերի մեջ վերածվում է շատի

*«Նրա աշակերտներից մեկը՝ Անդրեասը՝ Սիմոն Պետրոսի եղբայրը, նրան ասաց. «Այստեղ մի պատանի կա, որ հինգ գարեհաց ունի և երկու ձուկ, բայց դա ի՞նչ է այսքան մարդու համար:»* Հովհ 6:8-9

*«Հիսուսն էլ ասաց. «Մարդկանց գետնի՛ն նստեցրեք»: Այնտեղ շատ խոտ կար: Արդ նստեցին. շուրջ հինգ հազար մարդ կար: Հիսուսը հացը վերցրեց, գոհություն հայտնեց Աստծուն ու բաշխեց նստածներին. նույն կերպ էլ ձկներից բաշխեց, որքան որ կամեցան:* Հովհաննես 6:10-11

### Ինչպե՞ս է Աստված մեր «քիչը» դարձնում իր «շատը»

*«Եվ Տերն ասաց Գեդեոնին. «Այն երեք հարյուր մարդկանցով, որոնք լակեցին ջուրը, ձեզ պիտի ազատեմ և Մադիամը քո ձեռքը պիտի մատնեմ, իսկ ամբողջ ժողովուրդը՝ ամեն մարդ, թող իր տեղը գնա»:* Դատավորներ 7:7

*«Դավիթը քարով ու պարսատիկով այսպես հաղթեց փղշտացուն, զարկեց փղշտացուն և սպանեց նրան, բայց Դավթի ձեռքին սուր չկար:»* Ա Թագավորների 17:50

- **Աստված նվազեցնում է մեր միջոցները**
- **Աստված խոշորացնում է մեր կարիքները**
- **Մեկը վստահում է Աստծուն իր ունեցած քչով**
- **Աստված գործածում է մեր ունեցած քիչը, որ ցույց տա թե ինչ մեծ է ինքը**

## Դաս 3: Հաշվի ցուցակի դասը

### Յուրաքանչյուր բախում դժվարության հետ կարող է առաջ բերել աճում

*«Երբ կշտացան, իր աշակերտներին ասաց. «Ավելացած կտորները հավաքե՛ք, որպեսզի ոչինչ չկորչի»: Հավաքեցին և ուտողներից ավելացած այն հինգ գարեհացի կտորներից տասներկու կողով լցրեցին:»* Հովհաննես 6:12-13

*«Ապա նրանց մոտ՝ նավ բարձրացավ, ու քամին դադարեց: Եվ աշակերտները չափազանց ապշած ու զարմացած էին: Որովհետև չէին հասկացել նաև այն հացի հրաշքը, քանի որ նրանց սիրտն ընդարմացած էր:»* Մարկոս 6:51-52

Հաջորդ Կիրակի: Հովիվ Սարօ Խաչիկեան

**ԱՌԱՋՆՈՐԴԻ ԸՆԴՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**